

որ այրեր հրաւիրելու նոյն ազատութիւնը կը վայելէին եւ հին Պարսից տիկնայք (Եսթ. Ա, Ե, Է):

Վերջապէս հայրապետն ալ, որ հոգեւոր իշխանութենէն զատ՝ քաղաքականապէս եւս բարձր դիրք մ'ունէր միշտ, ճոխ սեղաններ կու տար երբեմն ազնուականաց: Մեծն Ներսէս՝ Հայր մարդպետի պատրաստեց «ըստ նմա արժանի աւագօրէն սպաս» (Փաւս. 114): Եւ իւր անուանի գլխասիրութեամբ՝ «տաճար իւր եւ սեղան զօր հանապազ աղքատաց եւ օտարաց էր եւ հիւրոց» (նոյն, 77):

4. — Ժամ կոչոց: — Ա. Եթէ պարզ քաղաքացւոյն կամ շինականին կարելոր կերակրոյն յարմարագոյն ժամն երեկոյեանն էր (աստ, 110-1), նոյնը բացարձակօրէն չենք կարող ըսել ազնուականին համար, որ միւսին պէս հարկադրուած չէր ցերեկըն ի բուն աշխատելու: Ուստի իրեն համար անխտիր եւ դիւրաւ «յօրինին ձաչք եւ ընրրիք» միանգամայն, ինչպէս իրաւամբ կ'ըսէ Մանդակունին (72): Զայս երբեմն պարագայն ալ կը պահանջէր: Զոր օրինակ՝ Ս. Ներսեսի խնճոյքը ցերեկին էր, զի հիւրն այդ պահուն եկած էր: Եւ խաչենոյ իշխանին տուածն էր «ձաչ մեծ», զի պատահեցաւ յետ Գանձասարայ եկե-